ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱԹԱՓՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ
(1918–1990-ական թվականներ)

ՎԼԱԴԻՄԻՐ ԽՈՋԱԲԵԿՅԱՆ

Ասել, թե Ադրբեջանում իրականացվող ցեղասպանության և փոքր ազգերի նկատմամբ հալածանքի սկիզբը դրվել է Ղարաբաղյան շարժմամբ, կնշանակի մեղանչել ճշմարտության և պատմական իրականության դեմ: Փաստերը վկայում են, որ այստեղ կիրառվող ազգային քաղաքականությունը թուրքական ցեղասպանության տրամաբանական շարունակությունն է: Զմոռանանք, որ Արևմտյան Հայաստանում իրականացվող ցեղասպանությանը զուգահեռ այն տեղի էր ունենում նաև Ադրբեջանի տարածքում բնակվող հայկական շրջաններում, ինչպես նաև Արևելյան Հայաստանում:

1918–1920 թթ. հայ բնակչության վիճակն ավելի քան անտանելի դարձավ Բաքվում, Գանձակում, Շուշիում, Նախիջևանում և այլուր: Այդ տարիներին Ադրբեջանում հայ բնակչությանը դաժանորեն սրի քաշեցին թուրքական օկուպանտները և մուսավաթական բանդաները: 1918 թ. սեպտեմբերին Բաքվի հայ բնակչության ջարդը տևեց երեք օր ու գիշեր: Ապանվեցին, անհետ կորան, փողոցներում շուրջկալներով գերվեցին հազարավոր խաղաղ, անզեն հայ բնակիչներ: Սա չի՞ հիշեցնում արդյոք Սումգայիթը, Բաքուն, Գանձակը, Շահումյանը, Կրկժանը և այլն:

Տարբերությունը ժամանակների մեջ է: Մարդատյացության, ցեղասպանության նպատակներով գործադրվող բարբարոսական ու արնախում մեթոդների, եղկելի ոճրագործությունների իրականացման ձևերի մեջ ոչ մի տարբերություն:

1918 թ. սեպտեմբերին Բաքվում երեք օր տևած ջարդի ընթացքում զոհվածների ընդհանուր թիվը հասնում էր 30 հազարի[1], բռնաբարված ու առևանգված հայ կանանց և դեռատի աղջիկների թիվը՝ մի քանի հարյուրի[2]: Սրի քաշված տղամարդկանց դիակների կողքին բռնաբարվում էին նրանց կանայք, մայրերը, դուստրերը, քույրերը: Մորն ու աղջկան բռնաբարում էին միմյանց ներկայությամբ: Ահա թե ինչ է հաղորդել «Правда» *թերթը «Բաքվի ողբերգությունը» վերտառությամբ հոդվածում. «... թուրքական ու մուսավաթական զինվորները հայերի կոտորածը սկսեցին քաղաքի արվարձաններում՝ Էրմենիքենդում և Աև քաղաքում, ուր հայ ազգաբնակչությունը լրիվ ոչնչացված է: Այնուհետև ջարդերը տարածվեցին քաղաքի կենտրոնական փողոցներում: Հազարավոր թուրք զինվորներ*

---

[1] *Ե. Սարգսյան. Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում. Երևան, 1964, էջ 418:*

[2] *Ա. Ցափուջյան. Բաքվի հերոսամարտը և անոր պարտության պատասխանատուները. Կահիրե, 1973, էջ 120:*

վխտում էին քաղաքում, ներխուժում տագնապով ու սարսափով համակված տները, սպանում դաշույններով, ատրճանակներով, գնդակահարում տեղն ու տեղը փողոցում, վայր նետում բարձրահարկ շենքերի վերին հարկերից:

Ռուս ընտանիքները նույնպես տուժեցին: Թուրքերը նրանց մեղադրում էին հայերի նկատմամբ կարեկցանք հանդես բերելու և նրանց պատսպարելու մեջ: Հաջորդ օրն առավոտյան հավաքեցին փողոցներում թափված դիակները և մեքենաներով դուրս տարան: Մյուս առավոտ ջարդը վերսկսվեց»[3]:

Ադրբեջանում իրականացվող ցեղասպանությունը ծրագրվել է տասնամյակներով և թելադրվում է Ադրբեջանը միայն ադրբեջանցիների համար քաղաքականության կենսագործման անհրաժեշտությամբ[4]: Այդ մասին հատուկ հոդ են տարել Ադրբեջանի իրար փոխարինող բոլոր ղեկավարները մեկ առ մեկ, առանց բացառության: Պատահական չէ, որ «Дружба народов» հանդեսի թղթակից Բ. Խոլոպովը գրում է. «Ադրբեջանի որոշ նախկին ղեկավարներից առիթ եմ ունեցել լսելու հանրապետությունում մեկ միասնական ազգ ստեղծելու անհրաժեշտության մասին»[5]: Նման քաղաքականությամբ այստեղ բացահայտորեն ձուլվել են այլ ազգեր, ժողովուրդներ, էթնիկական խմբեր, ձուլվել են հարկադիր մեթոդներով, նրանց նկատմամբ անբարենպաստ միջավայր ստեղծելով, մարդահամարների ընթացքում ազգերի սահմանագրական իրավունքները ոտնահարելով, խեղաթյուրելով վիճակագրական իրական տվյալներն ու բուն վիճակագրությունը: Այս ճանապարհով ձուլվել են ու շարունակում են ձուլվել քրդերն ու թալիշները, թաթերն ու լեզգիները, դաղստանցիներն ու իրանցիները, ցախուրիներն ու ավարները և այլ փոքրաթիվ ժողովուրդներ:

Մինչև 1988 թ. նախորդող «խաղաղ» տարիներին արտաքուստ այն պատկերն էր ստեղծվել, որ Ադրբեջանում «մեծ հաջողությամբ» ավարտի փուլին է հասցվել միևնույն դավանանքին պատկանող այլ ազգությունների ու էթնիկական խմբերի ձուլումը: Մինչդեռ իրական կյանքն ավելի զորու դուրս եկավ ջրի երես հանելով փոքրաթիվ ազգությունների ճակատագրի նկատմամբ գործադրվող բռնությունները: 1926 թ. մարդահամարի տվյալներով Ադրբեջանում ապրում էին 77,3 հազ. թալիշներ, 41,2 հազ. քրդեր, 37,3 հազ. լեզգիներ, 28,4 հազ. թաթեր, 19,1 հազ. ավարներ, 15,5 հազ. ցախուրիներ, 9,5 հազ. պարսիկներ[6]: Եվ քանի որ այդ ժողովուրդները, ադրբեջանցիների նման, բնութագրվել են բարձր բնական աճով և նվազ շարժունակությամբ, բոլորը, միասին վերցրած, այսօր պետք է հասնեին միլիոնի: Այնինչ 1979 թ. մարդահամարի տվյալներով ադրբեջանցիները 1926 թ. մեկ միլիոն 438 հազարից հասել են 4 միլիոն 708,8 հազարի, իսկ մարդահամարի փաստաթղթերում քրդեր, թալիշներ, պարսիկներ, ցախուրիներ չեն հիշատակվում: Թաթերն ավելանալու փոխարեն 1926 թ.

---

[3] "Правда", 21.IX.1918.

[4] "Дружба народов", 1989, № 2, с. 184.

[5] Նույն տեղում:

[6] ЗСФСР в цифрах. Тбилиси, 1927, с. 6—7.

28,4 հազարից մնացել են ընդամենը 8,8 հազ., 1989 թ.՝ 10,2 հազ.: Ինչ վերաբերում է թալիշներին, ապա նրանք 1926 թ. 77,3 հազարից 1979 թ. մարդահամարի նյութերում նույնպես չեն հիշատակվում, իսկ 1989 թ. մարդահամարին կազմել են 21,2 հազ. մարդ[7]: 1979 թ. մարդահամարի նյութերում լեզգիները ներկայացվել են ընդամենը 158 հազարով: Դա վկայում է այդ ժողովուրդների կամ բռնի ասիմիլացման, կամ մարդահամարների ժամանակ կամայականորեն, նպատակային կարգով որպես ադրբեջանցիներ գրանցելու փաստի մասին և կամ էլ ստեղծվում է մի այնպիսի յուրահատուկ իրավիճակ, երբ քուրդը, թալիշը, թաթը, լեզգին... ինքն է փոխում իր ազգային պատկանելությունը:

Այդ դիրքերից խնդրին մոտենալիս պատմաբան Ա. Աբասովը գրում է. «Ադրբեջանի քրդերի բնական ձուլման (ընդգծումը մերն է – Վ. Խ.) տևական ընթացքն իր ավարտի փուլն է թևակոխել դեռևս XIX դ. վերջին: Դա կապված է այն հանգամանքի հետ, որ Անդրկովկասի տարածքում քրդերն իրենց դավանանքով (մուսուլմաններ), տնտեսվարման ավանդական եղանակներով (ոչխարաբուծություն) շատ ավելի մոտ են ադրբեջանցիներին: Ներկայումս, փաստորեն, քրդերն ադրբեջանցիներից չեն տարբերվում կենցաղով ու մշակույթով»[8]: Նման հարցադրումով Աբասովը և ուրիշներ[9] նախ, փորձում են «գիտականորեն հիմնավորել», որ Ադրբեջանում փոքրաթիվ ազգերի ձուլման պրոցեսն օրինաչափ երևույթ է, տվյալ տարածքում մեծաթիվ ու փոքրաթիվ ազգությունների բնականոն զարգացմանը հատուկ երևույթ, իսկ մյուս կողմից՝ հանգիստ, առանց աղմուկի, մերժել այն իրողությունը, որ Ադրբեջանում փոքր ազգերի ձուլումը չի իրականացվել նախապես մշակված պլանով՝ բռնությամբ ու հալածանքով: Հենց ինքը՝ Ա. Աբասովը, հիշատակում է, որ Ադրբեջանն աչքի է ընկնում առանձին էթնիկական խայտաբղետությամբ և դրանց թվակազմը «դժվար է որոշել, քանի որ նրանցից շատերը կենցաղում պահպանելով իրենց ազգային լեզուն, իրենց ադրբեջանցի են համարում և համապատասխանաբար գրանցված են անձնագրերում և մարդահամարներում»[10]: 1979 թ. մարդահամարի «տեղեկագրում Ադրբեջանում քրդերի թիվը չի հիշատակվում» ըստ Աբասովի, այն պատճառով, որ «հավանաբար, հաշվի է առնվել նրանց նվազման միտումը»[11]:

Ադրբեջանում փոքրաթիվ այլ ազգերի ձուլումը սերտորեն միահյուսվել է քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ բռնությունների և, առաջին հերթին, հայ բնակչությանն իրենց բնակավայրերից բռնագաղթեցնելու ակտիվ քաղաքականության հետ: Այդ քաղաքականությունը տարբեր ժամանակներում արտահայտման յուրահատուկ ձևեր է ընդունել: Անհատի պաշտամունքի և լճացման տարիներին դրանք հիմնականում դրսևորվել են հետևյալ դրդապատճառների ազդեցության ներքո: Այն է՝ ազգային իրավունքների ոտնահարում, ազգային արժանապատվության նկատմամբ

---

[7] Նույն տեղում:

[8] "Коммунист Азербайджана", 1989, № 2, с. 86.

[9] Նույն տեղում:

[10] Նույն տեղում:

[11] Նույն տեղում, էջ 83:

բացահայտ և քողարկված, ուղղակի և անուղղակի արտահայտված ոտնձգությունների և խտրական քաղաքականության կիրառում, ղրանց ուղեկցող ազգային, սոցիալական, տնտեսական ու քաղաքական զարգացման բնականոն ընթացքը կանխամտածված ձևով խաթարող այնպիսի միջոցառումների գործադրում, որոնք բնորոշ չէին նույնիսկ գաղութային որևէ երկրի գաղութատիրության ամբողջ պատմության ընթացքում:

Այս կարգավիճակը, եթե Ադրբեջանում բնակվող մուսուլմանական ժողովուրդներին հիմնականում դրդել ու մղել է ձուլման, ապա քրիստոնյա ժողովուրդներին մղել է բռնագաղթի, քանի որ նրանց ձուլելու բոլոր փորձերը գրեթե ի դերև են եղել: Շատ դեպքերում, եթե արտագաղթն արտաքուստ կամավոր բնույթ էլ է կրել, միևնույն է, հիմքում գերազանցապես եղել է հարկադրանքը: Երբեք հարց չի ծագում, թե այդ ինչ պատահեց, որ 1970 և 1979 թթ. մարդահամարների միջև ընկած ընդամենը ինը տարիների ընթացքում Ադրբեջանական ԽՍՀ-ում ադրբեջանցիների թիվը 25 տոկոսով՝ 932 հազ. ավելանալու պայմաններում, ռուսների թիվը 1970 թ. 510 հազ. իջավ 475 հազ. կամ հայերի թիվը 483 հազ. իջավ 475,5 հազարի: Բայց իրականում ռուսները և հայերը ավելի շատ են պակասել:

Հիշենք հայերի նկատմամբ կիրառված օրինականության այդ խախտումներից մի քանիսի արձագանքը միութենական մամուլի էջերում[12], որոնք վկայում են հայերի հանդեպ Ադրբեջանի ղեկավարների անհանդուրժողական վերաբերմունքի և ոչ քիչ ադրբեջանցիների մուսուլմանական կրոնական ֆանատիզմի դրսևորման փաստերի մասին՝ մինչև 1988 թ. «ղարաբաղյան դեպքերը»: Ադրբեջանի ընդհանուր ընակչությունը 1979 թ. 6 մլն 28 հազ. մարդուց 1989 թ. հասավ 7 մլն 29 հազարի, այսինքն՝ ընդամենը 10 տարում ավելացավ մեկ միլիոնով: Բայց այդ ընթացքում նույնպես, հայերի հետ մեկտեղ, շարունակում էին պակասել ռուսները և ազգային փոքրամասնություն կազմող այլ ժողովուրդներ: 1970–1989 թթ., այսինքն մինչև 1988–1990 թթ. դեպքերը, հանրապետությունը լքել է տասնյակ հազար ռուս ազգաբնակչություն:

Ադրբեջանում հայերի նկատմամբ կիրառվող ազգային հալածանքի և խտրական քաղաքականության հետևանքով, մինչև 1988 թ. սումգայիթյան բռնագաղթը, արդեն էապես փոխվել էր Ադրբեջանական ԽՍՀ-ից ԽՍՀՄ հայ բնակչության տեղաբաշխման աշխարհագրությունը: Սովորական էր դարձել այն, որ Ադրբեջանում բնակվող հայերն արտագաղթում էին Հայկական ԽՍՀ, միութենական այլ հանրապետություններ: ԽՍՀՄ-ի տարբեր շրջաններում, մասնավորապես Հյուսիսային Կովկասում, միջինասիական հանրապետություններում հայ բնակչության հիմնական մասը ԼՂԻՄ-ից, Բաքվից, Կիրովաբադից, Շահումյանից, Շամխորից, Դաշքեսանից, Խանլարից արտագաղթածներն էին:

Դա, անշուշտ, «խաղաղ» զարգացման տարիներին էր, երբ նույնիսկ մի քիչ այլ էր վերաբերմունքը հայ և ռուս մասնագետ կադրերի նկատմամբ, թեև զգույշ և սիրաշահող քաղաքականությունը հաճախ էր իր տեղը զիջում նրանց ազգային արժանապատվության բացահայտ ոտնահարմանը: Նման քաղաքականությունը բացատրվում էր մասնագետների խիստ կա-

[12] "Известия", 18.IV.1987; "Сельская жизнь", 24.XII.1987.

րիքով: Նրանք չափազանց անհրաժեշտ էին զարգացող ժողովրդական տնտեսությանը և մեծ օգնություն էին ցույց տալիս Ադրբեջանում կադրերի պատրաստման գործին: Մինչդեռ այդ տարիներին սակավ էր ադրբեջանցիներից մասնագետ կադրերի, մասնավորապես տեխնիկական մտավորականությունը ներկայացնող բարձրորակ ինժեներների, տեխնիկների, նույնիսկ բարձր որակավորման բանվորների, ինչպես նաև գիտության, մանկավարժության, առողջապահության, մշակույթի, արվեստի, ճարտարապետության, մտավոր շատ այլ բնագավառները ներկայացնող մասնագետների թիվը: Հանրապետությունում սեփական ազգային կադրերի բանակ ստեղծելու համեմատ մշակվում էր նոր վերաբերմունք այլազգի մասնագետների նկատմամբ: Բայց քանի որ Ադրբեջանում ոչ միայն «մեկ միասնական ազգություն» ստեղծելու, այլև պանթուրքական նկատառումներով թելադրվող հեռահար նկրտումներն իրագործելու ճանապարհին ընդդիմադիր եղան և անհաղթահարելի պատնեշ դարձան հիմնականում հայերը, ապա հարկավոր էր մշակել և կենսագործել հանրապետությունը հայերից, երբեմն էլ ռուսներից «մաքրազարդելու» բարբարոսական մեթոդներ: Ահա սա էր սադրիչների կողմից հայերի նկատմամբ Ադրբեջանում ատելություն ու թշնամանք բորբոքելու «տրամաբանական» հիմքը:

Վիճակագրական տվյալներով հին հայկական մարզ Նախիջևանում 1917 թ. ապրում էր 53,9 հազ. հայ (բնակչության ընդհանուր թվակազմի շուրջ 40 տոկոսը)[13]: Բայց արդեն 1926 թ. մարդահամարի տվյալներով այդ թիվը շուրջ 5 անգամ նվազեց՝ կազմելով ընդամենը 11276 մարդ[14]: Լեռնային Ղարաբաղի նման Նախիջևանը, որպես ինքնավար հանրապետություն, անհիմն կերպով Հայաստանից հանձնվեց Ադրբեջանին:

Բանն այն է, որ թուրքական երկրորդ ներխուժման և բնակչության զանգվածային ջարդերից հետո Նախիջևանի հայ բնակչությունը 1920 թ. ստիպված էր անվերադարձ թողնել իր հայրենի օջախը: 1918–1920 թթ. ջարդից փրկված և իրենց տուն ու տեղը լքած նախիջևանցի հայերին, հետագայում, խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, ադրբեջանական իշխանություններն արգելեցին վերադառնալ իրենց բնօրրանը, թեև նրանց տները դատարկ էին, դռները փակ, հողերն անմշակ: Ադրբեջանի և Նախիջևանի կենտրոնական կոմիտեները բազմիցս կայացրած հատուկ որոշումներով[15] ամեն կերպ արգելք հարուցեցին նրանց վերադարձին: Հետագայում այդ արգելման սկզբունքն էլ ավելի խորացվեց, և ստեղծվեցին բոլոր խոչընդոտները հայերի վերադարձը կասեցնելու համար: 1922–1926 թթ. Նախիջևանի փախստական հայերը բազմաթիվ դիմումներ են ուղարկում Ադրբեջանի և Նախիջևանի կառավարություններին իրենց նախկին բնակավայրերը վերադառնալու կապակցությամբ: Պատասխան չստանալով նրանք դիմում են միութենական համապատասխան մարմիններին: 1925 թ. մարտի 11-ին Խորհրդային Միության Նախարարների խորհրդի

---

[13] "Кавказский календарь на 1917 г.", Тифлис, с. 215-221; Численность и состав населения СССР, М., 1984, с. 126.

[14] Всесоюзная перепись населения 17 декабря 1926 г. Краткие сводки, вып. IV, М., 1927, с. 127, 128.

[15] *ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 130, ց. 6, գ. 197:*

նախագահ Ռիկովի՝ Նախիջևան կատարած այցելությունից հետո որոշ տեղաշարժեր եղան Անդրկովկասի Կենտգործկոմի պրակտիկայում գաղթականների հարցի լուծման ուղղությամբ: Ռիկովը կառավարությանը մեղադրեց «համատարած խորհրդային այլանդակություն»[16] ստեղծելու մեջ, որից հետո վճռական միջոցներ ձեռք առնվեցին վերացնելու այդ կառավարությունը, նույնիսկ իշխանության որոշ ներկայացուցիչներ գնդակահարվեցին: Նախիջևանի գաղթականների գծով կազմված հատուկ հանձնաժողովը 1925 թ. հունիսի 26-ին Ռիկովին է հանձնում մի հատուկ գիմում, որտեղ նրանք ուղղակի մեղադրում են Նախիջևանի Հանրապետության կառավարության նոր ղեկավարությանը՝ հայերի նկատմամբ ցուցաբերած դիտավորությունների ու հալածանքների, ինչպես նաև «անընդունակության, պահպանողականության, տգիտության և հայերի նկատմամբ ազգային թշնամանք դրսևորելու մեջ»[17], հայտարարելով, որ «երկրամասի ներկայիս վարչակազմը նույնքան բացասական վերաբերմունք ունի փախստական հայերի հարցի նկատմամբ, ինչպես և նախկին ժողկոմխորհը»[18]:

Ադրբեջանի Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 6-ի որոշման մեջ նշվում է, որ «հավասարարական հողաբաշխում իրագործելու նպատակով... և Նախիջևանի ԻԽՍՀ սակավահողության պատճառով արգելվում է Նախիջևանի ԻԽՍՀ վերաբնակեցնել գյուղատնտեսությամբ զբաղվելու համար հողաբաժիններ ստանալ ցանկացողներին և դրան համապատասխան առաջարկվում է Նախիջևանի ԻԽՍՀ հողժողկոմատին հողաբաժիններ տալ միայն այն անձանց, ովքեր հանրապետություն են տեղափոխվել մինչև 1925 թ. ապրիլի մեկը»[19]: Այս որոշումը միայն անտեղյակների համար էր: Չէ որ մինչև 1925 թ. ապրիլի մեկը ոչ մի հայ չէր կարող բնակություն հաստատել Նախիջևանի ԻԽՍՀ-ում ոչ միայն այն պատճառով, որ 1922 թ. սկսած Ադրբեջանական ԽՍՀ-ի այս տարածքը փակ էր գաղթականների համար, այլև այն պատճառով, որ Նախիջևանը սահմանամերձ գոտի էր և այնտեղ մինչև 1925 թ. ապրիլի մեկը ոչ ոք չէր կարող բնակություն հաստատել առանց գրանցման:

1926–1979 թթ. ընթացքում Նախիջևանի ԻԽՍՀ բնակչության 229,2 տոկոս ընդհանուր աճի պայմաններում ադրբեջանցի բնակչությունն աճեց 2,6 անգամ, իսկ հայերինը կրճատվեց 3,3 անգամ: 1988 թ. դեպքերից հետո այնտեղ, հավանաբար, ապրում էին 1–2 հազ. հայ: Նախահեղափոխական չրջանի Նախիջևանի գավառի 44 հայկական գյուղերից մնացել էին միայն երկուսը: Իսկ այժմ՝ ոչ մեկը:

Հայ ազգաբնակչության արտաբնակեցմանն ուղղված հետևողական քաղաքականությունն ուղեկցվում էր հայ ժողովրդի պատմական և մշակութային հուշարձանների ոչնչացմամբ: Սկզբում Ադրբեջանի պատմաբաններն իրենց սեփականությունը հայտարարեցին Հայաստանի պատմական տարածքի մի մասը, հետո՝ պատմական հուշարձաններն ու մշակու-

---

[16] "Заря Востока", 12.III.1925.
[17] ՀՀ ԱԱ, ֆ. 130, ց. 6, գ. 197, թ. 68:
[18] "Заря Востока", 12.III.1925.
[19] ՀՀ ԱԱ, ֆ. 130, ց. 6, գ. 197, թ. 10:

թային արժեքները: Սակայն դա չխանգարեց նրանց կրոնական առաջնորդներին ադրբեջանական ժողովրդին «սուրբ պաաերազմի» հանել պատմական արժեքներ ներկայացնող եզակի ճարտարապետական հուշարձանների դեմ: Հարց է ծագում՝ եթե դրանք ադրբեջանական մշակույթի ժառանգություն են, ապա ինչո՞ւ են այդպես բարբարոսաբար ավերվում, ոչնչացվում, քարուքանդ արվում: Այսպես, 1975 թ. ամռանը Նախիջևան քաղաքում շինարարության պատրվակով ավերվեց Սուրբ Երրորդություն եկեղեցին, որը հիմնադրվել էր VII դ.: Այդ եկեղեցում, ինչպես վկայում են պատմաբանները, 705 թ. արաբ նվաճողները ողջակիզել են հայ նախարարներին: 1987 թ. հոկտեմբերին ոչնչացվեց Ադուլիսի հայկական գլխավոր գերեզմանոցը: Վերացվել են շուրջ 400 միջնադարյան տապանաքարեր՝ ավելի քան 100 արձանագրություններով, որոնք պատմաէթնոգրաֆիական մեծ արժեք էին ներկայացնում[20]: Ավերվել են հայ ճարտարապետների հոյակերտ ստեղծագործությունները՝ Սուրբ Կարապետ եկեղեցին (X դ.) Աբրակունիսում, Մեծոպի (ներկայումս՝ Բագամլու)՝ Սուրբ Աստվածածին եկեղեցին (XII դ.) և այլ հինավուրց եկեղեցիներ ինչպես Նախիջևանում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում:

Հայ բնակչությանն իրավազրկելու, ճնշելու և հալածելու տասնամյակներ շարունակ իրագործվող քաղաքականությունն Ադրբեջանում 1988 թ. սումգայիթյան դեպքերով մտավ մի նոր փուլ, երբ գործադրվեցին մարդասպանության բոլոր մեթոդներն ու ձևերը: Խաղաղ, անզեն բնակչության՝ զառամյալների, կանանց ու երեխաների նկատմամբ, կազմակերպված ձևով զենքի գործադրումը, հայ բնակչության բռնագաղթն ու արտաքսումը դարձրեց անխուսափելի: Եվ եթե մինչ այդ, բռնագաղթի նախորդ փուլերում, «սպիտակ» ջարդը հիմնականում իրականացվում էր առանց զենք գործադրելու, ապա այս փուլի համար բնորոշը «կարմիր» ջարդն էր: Դա ցեղասպանության քաղաքականության արտահայտման շատ բնորոշ ձևն է, երբ ջարդի հետևանքով բռնությամբ արտաքսված բնակչությունն ինքն էլ ոչ մի կերպ չի ցանկանում վերադառնալ և բնակություն հաստատել իր նախկին բնակավայրերում: Թող ամեն մի նորմալ քաղաքացի մի պահ իրեն գնի փախստական հայի տեղը, երբ իր երեխային խոշտանգել են, կնոջն ու աղջկան բռնաբարել, հրապարակայնորեն ենթարկել ծաղր ու ծանակի, բարբարոսական անմարդկային մեթոդներով ավերել, կողոպտել իր տունն ու տեղը, սպանել, խոշտանգել ... Ի՞նչի նման կլինի կյանքն այնտեղ, որտեղ ամեն մի քայլափոխի մարդը պիտի վերապրի այդ դժոխային մղձավանջը: Որ դա ցեղասպանություն է, բացատրվում է ոչ միայն զանգվածային ջարդերով, մարդակերությանը բնորոշ արնախում մեթոդների գործադրմամբ, այլև նրանով, որ նախ, այն նախապես պլանավորվում, կազմակերպվում ու ղեկավարվում է մեկ միասնական կենտրոնից: Երկրորդ, բռնագաղթի ու արտաքսման պատճառով բնիկ ժողովուրդը քշվում է իր բնօրրանից, պապենական հողից, տուն ու տեղից: Նման ճանապարհով հայրենիքի կորուստը նույնպես ցեղասպանություն է:

---

[20] «Գրական թերթ», 17.XII.1987:

Մ՞ւմ հայտնի չէ, որ բոլորի աչքի առջև հայ բնակչության երեք օր տևող ջարդի ընթացքում և դրանից հետո, արդեն խոշտանգված փախստական գարձավ Սումդայիթում ապրող 17 հազ. հայ բնակչությունը: Նրանք մազապուրծ փախան սպանդից, փախան, ով ինչպես կարող էր՝ որը ծպտյալ, որն ավտոմեքենայով, որը ոտքով, բացառիկ «երջանիկներին» էլ բախտ վիճակվեց մի կերպ հասնել Բաքու և այնտեղից, տասնապատիկ ավելի վճարելով, ինքնաթիռներով փախչել Ադրբեջանից: Դա 1915 թ. ցեղասպանության շարունակությունն էր XXI գ. նախաշեմին:

Սումգայիթը նախապես պլանավորված փորձ էր հետագա մեծամասշտաբ ցեղասպանություն իրագործելու համար: Դրա կազմակերպիչները դրանով իսկ ցանկանում էին շոշափել ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների, իրավապահ մարմինների, լրատվական միջոցների դիրքորոշումը: Փորձը լավ քննություն բռնեց: Սումգայիթյան և դրան հաջորդող դեպքերի դահիճները շրջանցվեցին, ոճիրը մնաց ստվերում, բանդիտիզմը չորակավորվեց և քաղաքական գնահատական չստացավ: Իսկ դա եղեռնագործին ավելի ոգևորելով՝ նոր ոճիրների մղեց:

Սումդայիթյան եղեռնը տևել է երեք օր ու գիշեր՝ բոլորի աչքի առջև: Եթե դա կազմակերպված չէր ու չուներ ղեկավար կենտրոն, հապա ի՞նչ էին անում կուսակցական, պետական, խորհրդային և իրավապահ մարմինները Սումգայիթում, այդտեղից մեկ-երկու քայլի վրա գտնվող Բաքվում: Նրանք լոկ դիտողի դերո՞ւմ էին: Ինչո՞ւ և ովքե՞ր են անջատել Սումգայիթում ապրող հայերի, միայն հայ բնակիչների հեռախոսները, նախապես ճշգրտել նրանց բնակարանների հասցեները, գործարաններում սառը զենք պատրաստել և այլն, և այլն: Ադրբեջանի ղեկավարները Բաքվում անտեղյա՞կ էին այս բոլորին: Դա դիտավորյալ «անտեղյակո՞ւթյուն» էր, թե՞ «մեղսագործություն»: Հավանաբար, թե՛ մեկը և թե՛ մյուսը: Հետագա անցքերը ցույց տվեցին, որ սպանդը կազմակերպվել է նախապես մշակված ծրագրով և ունեցել է իր ղեկավար կենտրոնը: Դրանում ակտիվ մասնակցություն են ունեցել հանրապետական, բացառված չէ նաև կենտրոնական իշխանությունները: Այլապես ինչո՞վ բացատրել կենտրոնական իշխանությունների այն վարքագիծը, որ դրսևորվեց ինչպես սումգայիթյան դատավարության, այնպես էլ հետագա դեպքերի ընթացքում:

Սումգայիթը վկայեց, որ ոճրագործի յուրաքանչյուր հաջորդ քայլը կմնա անպատիժ, եկել է գործելու ժամը, Ադրբեջանը հայաթափ անելու ամենահարմար պահը: Սումգայիթից հետո Ադրբեջանում ապրող հայ բնակչության ճակատագրի համար «մտահոգություն» արտահայտեց ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովը: Իհարկե, դա «մտահոգություն» էր, թե «մտավախություն», միգուցե և սպառնալիք, այսօր դժվար է ասել: Բայց մի բան պարզ էր, որ գլխավոր քարտուղարի այս «մտահոգությունը» շատ լավ ընկալեցին Ադրբեջանում: Այո, Ադրբեջանում հետագա իրադարձությունները հասունանում էին կենտրոնական իշխանությունների, և, առաջին հերթին, ԽՄԿԿ գլխավոր քարտուղարի կողմից սումդայիթյան ցեղասպանությունը վարպետորեն կոծկելու, Ադրբեջանում աստիճանաբար սանձազերծվող հետագա դեպքերը «չնկատելու» և,

դրանք, ինչ-որ ձևով, «արդարացնելու» մտացածին քաղաքականությամբ: 1988 թ. սումգայիթյան ցեղասպանությամբ սկիզբ առած բռնագաղթը ժամանակի ընթացքում ընդունեց ավելի ու ավելի ահագնացող չափեր, արյունռուշտ ու բարբարոսական բնույթ: Դրանով սկիզբ առավ բռնագաղթի առաջին փուլը:

Ադրբեջանում հայ բնակչության ցեղասպանությունն ու զանգվածային բռնագաղթը Սումգայիթից հետո բռնկվեց իրար հաջորդող բազմաթիվ փուլերով[21]: Մարդասպանության բռնկման ամեն մի նոր փուլ սկսվում էր զանգվածային ջարդերով ու մեծ բռնագաղթով: Եվ եթե բռնկման ամեն մի նոր փուլի համար բնորոշը «կարմիր» ջարդն էր, ապա հարաբերական դադարի փուլերում բռնագաղթը ջարդով էր ուղեկցվում մերթ ընդ մերթ: Հարաբերական դադարի ընթացքում փախստականների շարքերը նոսրանում էին:

1988 թ. նոյեմբերի 21–22-ին Ադրբեջանում սկսվեց հայ բնակչության ցեղասպանության բռնկման երկրորդ փուլը: Ցեղասպանության ալիքը ոլորապտույտի մեջ ներքաշեց Ադրբեջանի դրեթե ամբողջ հայ բնակչությանը:

1989 թ. հուլիս-օգոստոսյան օրերից սկիզբ առավ երրորդ մեծ բռնագաղթը:

1990 թ. հունվարին Բաքվում ժողովրդական ճակատը, Ադրբեջանի կառավարող իշխանությունների հետ բռունցք կազմած, ձեռնարկեց մի նոր ցեղասպանություն, որը դարձավ Ադրբեջանից հայերի արտաքսման չորրորդ և ավարտին մոտեցնելու ամենավճռական փուլը: Սումգայիթը երկնեց Բաքու:

Արյունարբու գազանի նման ոհմակ կազմած հրոսակախմբերը յոթ օր անընդհատ անցնելով թաղից թաղ, հրկիզում էին հայերի տները, սպանում էին, խոշտանգում, առանց տարիքը նկատի առնելու գազանաբար բռնաբարում: Հալածվածների աչքի առջև բաժան-բաժան էր արվում նրանց ունեցվածքը, իրենց իսկ «բարեհոգի» հարևանների և խուժանի միջև: Ում բախտ վիճակվեց հրաշքով հրի ճարակ չդառնալ, գլուխը հազիվ փրկելու բնազդով, որը կիսամերկ, որը միայն տնային չապիկով ու շրջազգեստով, որը ոտաբոբիկ, ճողոպրում էր այդ դժոխային կոտորածից: Ոչ ոքի այլևս չէր հետաքրքրում արդար քրտինքով տարիների ընթացքում վաստակած տուն ու տեղը, ապրուստը, կայքը, հանդերձանքը: Մթնոլորտը թունավորված էր, օդը հեղձուցիչ ու ապականված: Գարշահոտության ու անբարոյականության միջավայրը դառնում էր անտանելի: Ադրբեջանցի հորից

---

[21] Առանձին հրապարակումներում փաստացի հարուստ նյութերի հիման վրա բացահայտվել են Խորհրդային Ադրբեջանից հայ բնակչության բռնագաղթի, 1988 թ. սկսված Ադրբեջանական ԽՍՀ բոլոր հայաշատ վայրերում ցեղասպանության ընթացքը, կցվել բոլոր բնակավայրերում (Սումգայիթ, Բաքու, Կիրովաբադ, Լեռնային Ղարաբաղ, Շուշի, Հագրութ, Խանլար, Շահումյան և այլն) զոհերի անձնանունների ցանկը, ագրեսիայի սոցիալ-տնտեսական, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի գնդակոծման հետևանքները: Տե՛ս И. Мовсесова. Вандализм в Баку. Ереван, 1991; Она же. Армяне в Баку. Быт и исход. Ереван, 1998. Վ. Խոջաբեկյան. Արցախը փորձության ժամին. Երևան, 1991, Լ. Մելիք-Շահնազարյան. Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ. Երևան, 1999 և բազմաթիվ այլ գրքեր, գրքույկներ, ամսագրային և ընթացիկ մամուլի հոդվածներ:

սերված զավակը հրաժարվում էր մորից, գնդակով խոցում նրան՝ հայ լինելու համար: Այդպես են նրան ներարկել կրոնի սպասավորն ու մտավորականությունը:

Բաքվում օրեր տևող զանգվածային ջարդը մեկ շաբաթ անց կիրառվեց ռուս ընտանիքների նկատմամբ: Այդ օրերին Բաքվից արտաքսվեցին և փախստական դարձան տասնյակ հազարավոր հայ և ռուս ընտանիքներ: Միջնադարյան բարբարոսական այդ բիրտ մեթոդները, սահմանախախտումները, սահմանապահների ընտանիքների նկատմամբ գործադրված գազանությունները արդարացնելու աստիճան խիստ չափավոր ու մեղմ ներկայացնելու հատուկ դիտավորությամբ ու մտահոգությամբ՝ Ադրբեջանի ղեկավարությունը, կենտրոնական թերթերն ու հեռուստատեսությունը պիտի փորձեին այդ բոլորը բացատրել, իբր թե վրիժառությամբ լցված այն «անտուն փախստականների» ծայրահեղ վրդովմունքով ու զայրույթի պոռթկումով, որոնք արտագաղթել են Հայաստանից (իրենց արտահայտությամբ՝ արտաքսվել) և մինչև օրս «հանգրվան չունեն» ու «թափառում են» անտուն: Պիտի փորձեին բացատրել նաև Իրանում աղերի «հայրենակիցների» հետ հաղորդակցվելու ցանկությամբ (թեև մինչ այդ նման ցանկություն էր արտահայտել միայն մեկ ընտանիք), պիտի փորձեին բացատրել սահմանամերձ գոտում խոտհարքներն օգտագործելու անհնարինությամբ: Եվ վերջապես, որպես ամենագլխավոր դրդապատճառ, պիտի փորձեին բացատրել Ղարաբաղյան շարժմամբ հանիրավի մեղադրելով Ղարաբաղյան ազգային ազատագրական պայքարը, այն դիտելով որպես ազերիների կողմից իրականացվող գազանությունների նախահիմք:

Ադրբեջանական ԽՍՀ կենտրոնական իշխանությունները ոչ միայն անտարբեր չէին, այլև հրահրում և ընթացք էին տալիս արյունահեղություններին: Միլիցիան համագործակցում էր ժողովրդական ճակատի հետ: Իսկ միութենական իշխանությունները, ֆեդերացիայի սկզբունքները պաշտպանելու, դրանցով նախատեսվող պարտականությունները կատարելու, վճռական միջոցներ ձեռնարկելու փոխարեն, գործից ու երևույթներից անտեղյակ անվանի և ոչ անվանի մարդկանց, հատկապես կազմակերպությունների, կոլեկտիվների, կանանց և այլ խորհուրդների միջոցով հականեհանվանե խրատական դասեր էին տալիս, քարոզներ կարդում թե՛ ազերիների, թե՛ հայերի գլխին, կարգախոս ճառերով «կարգի հրավիրում» և՛ գազանին, և՛ նրա երախում արդեն կուլ գնացող անմեղ զոհին:

Ի՞նչ կա որ: Մեկ շաբաթ Բաքվում արյուն է հեղվում, բայց ՏԱՍՍ-ի հեռագրական ժապավենից հորդացող լուրերն ազդարարում են Ավանեսովների ընտանիքում երկու (՞) ազերիների կացնով սպանելու մասին, Բաքվում գազանացած ամբոխին ոտքի հանելու մեղքը բարդում բանդիտների հարձակումներին դիմակայելու բնազդով ինքնապաշտպանության դիմած Ա.Ավանեսովի վրա:

Ադրբեջանի ժողովրդական ճակատի ղեկավարությամբ, նախապես ծրագրված, ոտքի ելան հոծ զանգվածներ՝ հայ, օրեր անց ռուս ու փոքրամասնություն կազմող այլ ազգությունների՝ Բաքվում և այլ վայրերում ոտնակոխ անելու համար: Որ Բաքուն լավ նախապատրաստված էր, պարզ երևում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երրորդ նստաշրջանում՝ 1990 թ.

փետրվարի 19-ին երկու պալատների համատեղ նիստում[22] որոշ պատգամավորների ելույթներից: Պատգամավոր Վ. Վ. Բակատինը նշում է, որ Բաքվի ջարդերը սկսվեցին հունվարի 13-ի «...միտինգից հետո: Ըստ նախապես բաժանված հասցեների, մինչև 5 հազար մարդուց բաղկացած ամբոխը գնաց թալանելու և սպանելու հայ բնակչությանը»: Այստեղ ամեն ինչ պարզ ասված է:

Բաքվեցի մի ռուս փախստական ուսուցչուհի «Учительская газета» թերթում ապագրած հոդվածում գրում է. «Էքստրեմիստները շատ լավ կազմակերպված էին, որը չես կարող ասել տեղական իշխանությունների մասին: Անցյալ տարվա վերջին ամբողջ քաղաքում, իբր թե մթերքների տալոնները բաշխելու նպատակով, տնային կառավարչության գրասենյակները բոլոր բնակիչներից պահանջում էին լրացուցիչ անկետաներ: Դրանցում հարկավոր էր հիշտակել նաև ազգությունը: Երբ սկսվեցին ջարդերը, էքստրեմիստները ունեին ճիշտ հասցեներ, թե որտեղ են ապրում հայերը, որտեղ՝ ռուսները, որտեղ խառը ընտանիքներ են և այլն: Դա մտածված ազգայնամոլական ակցիա էր»[23]:

Բաքվի արյունահեղությունները սկսվել են հունվարի 13-ի միտինգից հետո, երբ Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Վեզիրովը հանդիպում է ժողովրդական ճակատի ներկայացուցիչներին և իր համերաշխությունն է հայտնում նրանց ծրագրերի կենսագործման առթիվ: Այդ հանդիպման ժամանակ նրա ելույթը հեռարձակվեց հեռուստատեսությամբ: Նա ամբողջ ժողովրդին միաբանվելու և Լեռնային Ղարաբաղի ժողովրդին պատժելու կոչ էր անում, հիշատակելով, որ բոլոր չարիքների ակունքը Լեռնային Ղարաբաղն է, ուստի պետք է հիմնահատակ ոչնչացնել չարիքի այդ որջը: Այդ նպատակով Վեզիրովը հիմնավորում է «մեկ բռունցք» կազմելու անհրաժեշտության գաղափարը, քանի որ առանձին մատներ իրարից անջատ գործելիս, կարող են ջարդվել, իսկ բռունցք դարձած՝ ոչ: Ոգևորված դիմելով ժողովրդին, Վեզիրովը կոչ է անում, թե մեր թշնամուն ռադ պետք է անենք մեր ճանապարհից, ինչպես ռադ արեցինք կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմը, հատուկ կառավարման կոմիտեն և շատ շատերին: Մեր ճանապարհը ոչ ոք չի կարող փակել: Լավ իմացեք, Կենտրոնը մեր ձեռքում է:

Բաքվում արտակարգ դրություն հայտարարվեց և զորք մտցվեց միայն այն բանից հետո, երբ սպառնալիքի տակ էր դրված Ադրբեջանում խորհրդային իշխանության գոյությունը: Կամ՝ Բաքվում քանի դեռ ռուս մարդկանց, զինվորականների ընտանիքների ջարդի լուրը չէր տարածվել, անգամ դրանից հետո էլ կենտրոնական իշխանությունները հավասարապես դատապարտում էին երկու ազգություններին էլ, երկուսից էլ պահանջում դադարեցնել արյունահեղությունը: Տարիների փորձը ցույց տվեց, որ Կենտրոնն իրադարձություններին միջամտում էր այն բանից հետո, երբ ազերիները ուժի գործադրումով ամեն ինչ արել-պրծել են:

---

[22] *Քանի որ նիստը դռնփակ էր, համագումարի հրապարակված սղագրական հաշվետվություններում այն չի ընգգրկված, սակայն «Ավանգարդ» թերթը հրապարակել է նիստի ձայնագրության սղագրությունը մասնակի կրճատումներով, հայերեն լեզվով («Ավանգարդ», 7.III.1990):*

[23] "Учительская газета", январь, № 5, 1990.

Մի կողմ թողնենք, թե ինչու արտակարգ դրությունը հունվարի 19-ից և ոչ 13-ից է հայտարարվում: Այո, մի կողմ թողնենք այն, որ հրոսակախմբերի նկատմամբ զենք գործադրվեց ոչ թե հայասպանության, այլ այն բանի համար, որ սպառնալիքի տակ դրվեց խորհրդային իշխանության գոյությունն Ադրբեջանում, երբ ցեղասպանության ալիքը ոլորապտույտի մեջ ներքաշեց ռուս և ռուսալեզու բնակչությանը: Այդ պահից հետո, Ավանեսովներին պարսավող լրատվական հեղեղը շրջեց իր երգապնակի երեսը, չմոռանալով Ադրբեջանում զինվորականների և նրանց ընտանիքների նկատմամբ դրսևորվող, իրոք, հակամարդկային և բարբարոսական վերաբերմունքի մեջ հավասարապես մեղադրել նաև հայերին:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի՝ Ադրբեջան զորք մտցնելու մասին ուշացած որոշումը սվիններով դիմավորեցին Ադրբեջանի ժողովրդական ճակատը, նրանց հրամանատարության տակ գործող բանդիտները, նույնիսկ, Ադրբեջանի Գերագույն խորհրդի նստաշրջանը: Ադրբեջանցիները լռում են այն մասին, որ մինչ զորքի մուտքը Բաքու իրենք ստեղծել էին մի այնպիսի իրավիճակ, որը հանգեցրել էր տասնյակ մարդկային զոհերի, տասնյակ հազարավոր հայերի և ռուսների հանրապետությունից արտաքսմանը: Այդ օրերին սրախողխող եղան 150 հայ:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երրորդ նստաշրջանի 1990 թ. փետրվարի 19-ի երկու պալատների համատեղ լիագումար նիստում Ե. Մ. Պրիմակովն իր ելույթում ասաց. «... մենք Ադրբեջանում բախվեցինք կոնկրետ իրավիճակի՝ ոճրագործ հայկական ջարդերի՝ Բաքվում, որոնք հանգեցրին տասնյակ մարդկային զոհերի և հաշված օրերի ընթացքում տասնյակ հազարավոր հայերի հանրապետությունից արտագաղթեցմանը... Ադրբեջանում մենք բախվեցինք այնպիսի իրադրության, երբ օգտվելով տեղական իշխանությունների կաթվածահարությունից, Ադրբեջանի ժողովրդական ճակատն ստեղծեց ռազմական միավորում և զինված խմբեր, որոնք շրջափակեցին բանակը, ՆԳՆ զորամասերը, զավթեցին զենք, այդ թվում նաև՝ բանակային ստորաբաժանումներից: Մենք բախվեցինք սահմանամերձ տեխնիկական համակարգի ավերի և երկու հարյուր կիլոմետրից ավելի երկայնքով Իրանի հետ սահմանը բռնի բացելու իրադրության: Այս ամենը նույնպես արվել է Ադրբեջանի ժողովրդական ճակատի հրամանով...

...Բանակային զորամասերի առջև խնդիր էր դրվել վերատեղաբաշխել և իրենց ներկայությամբ ապահովել բնակչության անվտանգությունը: Սակայն ճանապարհները շրջափակված էին, երկաթուղում շրջափակված էր նաև ՆԳՆ այն հատուկ զորքերի տեխնիկան, որոնք արդեն իսկ Բաքվում էին: Առանց այդ տեխնիկայի, ինչպես նաև այդ զորքերին ավտոբուսներ, միկրոավտոբուսներ տրամադրելու մասին խնդրանքների գործնական նենգադուլի պայմաններում ՆԳՆ զորամասերը զրկված էին շարժունակությունից: Այս ամենը կատարվում էր մի քաղաքում, որտեղ բառացիորեն նախօրեին տեղի էին ունեցել սարսափելի ջարդեր, և որտեղ տակավին հայտնաբերվում էին ճանաչված ու չճանաչված դիակներ: Այս ամենը կատարվում էր Բաքվում, որտեղ Ադրբեջանի ժողովրդական ճակատի հրամանով պաշարվել էին պետական շենքերը, փականապատնեշվել քաղաք տանող ու բուն քաղաքի մայրուղիներն ու փողոցները.... Պետական սահմանը

բացելը հարկավոր էր նրանց, ովքեր ցանկանում էին խոշոր զինված ուժեր ունենալ՝ նախապատրաստվող լայն ծավալի զինված գործողությունների պայմաններում... Ադրբեջանի ժողովրդական ճակատը որոշեց այս կերպ ցույց տալ իր ուժը, ստուգել իշխանությունների ամրությունն ու կայունությունը... գրոհայինների ձեռքով ընկած զինվորների ու սպաների կյանքի գնով փրկվել են հազարավոր խաղաղ բնակիչների կյանքեր: Մի՞թե սա սրբապղծություն չէ: Այո, զոհվել են ոչ միայն գրոհայիններ, այլև անմեղ մարդիկ: Բայց ո՞ւմ խղճի վրա է նրանց մահը: Արդյո՞ք գնդակոծմանը կրակով պատասխանած զինվորների խղճի վրա, թե այն հրոսակների, որոնք թաքնվել էին ընակելի տներում»[24]:

Լայնորեն տարածվեցին սուտ լուրեր այն մասին, որ Բաքվում տանկերի թրթուրների տակ զոհվել են հազարավոր մարդիկ, կանայք ու երեխաներ: Մինչդեռ այդ նույն նստաշրջանում հիշատակված տվյալներով, ամենակրտսեր տարիքով մարդը, որ զոհվել է առաջին երեք օրերի ընթացքում, 14-ամյա մի տղա էր, որը գտնվում էր գրոհայինների շարքերում... «իսկ ամենատարիքավոր կինը՝ ծնված 1915 թ., մահացել էր ինֆարկտից, բայց թաղվել էր որպես թրթուրների տակ զոհված: Յուրաքանչյուր քայլում զրպարտություն, կեղծիք»[25]: Ավելին, համաշխարհային հանրության աչքին թոզ փչելու նպատակով, ադրբեջանցիները Բաքվում իրենց իսկ կազմակերպած եղեռնագործությունների համար հայտարարել են սդո օր և ամեն տարի այդ օրը հիշատակում են առանց ամոթի:

Ադրբեջանի ժողովրդական ճակատը լավ նախապատրաստվել էր ոչ միայն զանգվածային ջարդեր և բռնագաղթեր կազմակերպելու, այլև զինվորականներին դիմակայելու, նրանց հետ հաշվեհարգար տեսնելու, ՆԳՆ ուժերը չեզոքացնելու, Ադրբեջանի ՆԳՆ հնարավորությունները լիովին օգտագործելու համար: Զինվորական ստորաբաժանումներից և ՆԳՆ պահեստներից զենք ու տեխնիկա զավթելու հետ մեկտեղ, օգտագործվեցին ազատորեն Իրանից բերված սպառազինության տեսակները: Օրեր շարունակ խախտելով Իրանի հետ պետական սահմանը, երկու կողմից էլ ազատ ել ու մուտ էր կատարվում: Իրանցիները զենքի առևտուր էին կազմակերպել Ադրբեջանում... Պուշկինոյում և Ջալալաբադում: Սովորական էին դարձել զենքի հափշտակումները, ռադիոլոկացիոն կայանները շարքից հանելը, կապի միջոցներին բռնությամբ տիրելը և այլն: Այլապես Բաքվում տեղի ունեցող ջարդի օրերին Ադրբեջանի ժողովրդական ճակատը ի՞նչ հնարքներով կարող էր իր տրամադրության տակ ունենալ տաքսիների հավաքակայանի այնպիսի միջոցներ, որոնք համալրված էին ռադիոկայաններով, շրջում էին քաղաքով մեկ և հաղորդումներ վարում յուրաքանչյուր վայրում[26]: Ըստ ԽՍՀՄ Գերագույն խորհրդում բերված տվյալների՝ սահմանի 200 կմ երկարությամբ և Բաքվում 60 կմ ընդհանուր երկարությամբ, մեկ շաբաթ շարունակ ամրություններ էին կառուցվում, որոնք կապվում էին «... նոր ԿրԱԶ-ներով կամ ԿամԱԶ-ներով, դրանց արանքներում պարտադիր բենզատար մեքենաներ էին կանգնեցնում: Այս ամենը եռակցվում էր,

[24] «Ավանգարդ», 7.III.1990:
[25] Նույն տեղում:
[26] Նույն տեղում:

ամրացվում, պատրաստել էին հրկիզող խառնուրդներով շշեր և այս ամբողջը պահպանվում էր գրոհայինների կողմից: Ամեն մի այսպիսի բարիկադում կամ արգելակուտակում 70-ից մինչև 700 մարդ էր գտնվում»[27]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանի երկու պալատների լիագումար նիստում բերվեցին փաստեր, որոնք վկայում էին այն մասին, որ ժողովրդական ճակատը լավ գիտենալով, որ զինվորները մանկական հիվանդանոցի վրա չեն կրակի, այնտեղ տեղավորել էին դիպուկահարների, տեղաբաշխել գրոհայինների, բացի դրանից, տեղադրել էին հզոր լուսարձակներ՝ զինվորական ավանը լուսավորելու համար: «Եվ դեռ զինվորները ներս չէին մտել, երբ նրանց հրամանով լուսարձակները միացվեցին, սկսվեց դաժան հրաձգություն այն զինվորների վրա, որոնք տեխնիկան վարելու համար զինակոչվել էին Ռոստովի մարզից և Կրասնոդարի երկրամասից: Այստեղ առաջինը զոհվեց չորս մարդ, և առաջինը վիրավորվեցին դեսանտայինները: Եվ, բնականաբար, երբ շարասյուները քաղաք մտան, բոլոր պատուհաններից կրակ էր տեղում, և կարելի էր նույնիսկ կասկածել, թե արդյո՞ք դեսանտայինների կրակոցներից են զոհվել խաղաղ բնակիչները: Որովհետև այս կողմից կրակում էին, այն կողմից կրակում էին, ո՞ւր էր թռչում գնդակը, ո՞ր դնդակից էր վիրավորվել մարդը, ի՞նչ իմանաս»[28]: Ավելին , «... մի կին դիմել է ՆԳՆ սերժանտներից մեկին խնդրելով՝ «օգնիր, ես վախենում եմ մտնել մութ նրբանցք»: Նա գնում է ուղեկցելու, հենց առաջին իսկ անկյունում նրան շշմեցնում են, քարշ տալիս բնակարան, աչքերը կապում, մերկացնում և ի վերջո տանում են, վզին օղակ գցում և նետում գերեզմանոց: Իսկ ռուս սերժանտը կենդանի մնաց, իր մեջ ուժ գտավ, կարողացավ դուրս պրծնել այդ օղակից»[29]:

Այս և նման կարգի երևույթներն Ադրբեջանում ներկայացվում են շատ պարզեցված տեսքով: Մինչդեռ ժողովրդական ճակատի և նրա ետևից գնացողների ու ճակատը ղեկավարողներից շատերի բարոյական նորմերը գնահատելու միակ չափանիշը դարձել է սադիզմը: Թեև նրանք սովոր են իրենց մեղքերը բարդել ուրիշների վրա և դրանում մեղադրել հենց նրանց, ում նկատմամբ գործադրում են ոճիրը: Այդ մասին է վկայում այն վայնասունը, որ բարձրացավ Ադրբեջանում՝ Բաքվում արտակարգ դրություն հայտարարելուց հետո: Բաքվում կատարվածի համար ոչ ոք զղջումի պահ չապրեց: Ավելին, ամենուրեք անպակաս էին բողոքի ցույցերն ու ամեն ինչ տակնուվրա անելու պատրաստակամության դրսևորումները, իրենց իսկ գործադրած վանդալիզմն ուրիշների վրա բարդելու կոչերը: Զարմանալին այն է, որ Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունը բողոք է հայտնում Բաքվում արտակարգ դրություն մտցնելու կապակցությամբ: Ըստ Վ. Վ. Բակատինի՝ «... անհասկանալի է անձամբ ինձ համար, թե օրինակ, ինչո՞ւ բողոք չհայտնվեց ավելի շուտ...: Անհասկանալի է, թե ինչո՞ւ հանրապետության կառավարությունն ու Գերագույն խորհուրդը բողոք չհայտնեցին, երբ Բաքվում ջարդեր էին տեղի ունենում»[30]:

---

[27] Նույն տեղում:
[28] Նույն տեղում:
[29] Նույն տեղում:
[30] Նույն տեղում:

Ադրբեջանում բնավ չի հիշատակվում հունվարի 13-ից 19-ի ընթացքում հանրապետությունում հայերի նկատմամբ տիրող հակամարդկային մթնոլորտի, եղկելի վարքագծի մասին: Նրանք իրենց հատուկ դիվանագիտությամբ նախահարձակ են լինում նախորդ օրերի բարբարոսություններն ու ոճիրները ստվերում թողնելու համար: Ըստ որում, նման դիվանագիտական քայլի են դիմում ոչ միայն ժողովրդական ճակատը, այլև Ադրբեջանի կառավարությունը, Գերագույն խորհուրդը, Մոսկվայում Ադրբեջանի մշտական ներկայացուցչությունը և այլ կազմակերպություններ:

Ադրբեջանի ժողովրդական ճակատը, մտավորականության շատ ներկայացուցիչներ, օգտվելով հանրապետության կառավարող մարմինների հովանավորությունից, չբավարարվեցին իրենց հանրապետության սահմաններից հայ բնակչության բռնի արտաքսումով, նրա նկատմամբ գործադրած վանդալիզմի վայրագ դրսևորումներով: Նրանք ամեն ինչ արեցին, որպեսզի խժդժություն կազմակերպեն Սամարղանդում, Դուշանբեում, Հյուսիսային Կովկասում և այլուր: Զանազան հնարքներով այդ շրջաններում սկսեցին տարածել հակահայկական լուրեր և տեղի բնակիչներին գրգռել հայերի դեմ: Նման ստահոդ լուրեր տարածվեցին Միության շատ վայրերում: Սադիստական արնախում բնազդով հետամուտ եղան Բաքվի սպանդից մի կերպ մազապուրծ փախած հայ կանանց, մանուկներին ու ծերերին, որոնք հանգրվանել էին Դուշանբե քաղաքում: Այստեղ, Ադրբեջանի ժողովրդական ճակատի ներկայացուցիչների կողմից տարածված անհեթեթ լուրերի ազդեցության տակ, հայերի դեմ ոտքի ելան շատ տաքգլուխներ, նրանց հավատացրին, որ փախստական հայերը պիտի զբաղեցնեն Դուշանբեում շուտով շահագործման հանձնվող բնակարանները: Հակահայկական հիստերիայով բորբոքված խառնամբոխին ոչինչ չէր կարող կանգնեցնել: Ջարդ ու փշուր արվեցին բնակարաններ ու խանութներ, կատարվեցին հրկիզումներ, բռնություններ գործադրվեցին անմեղ մարդկանց նկատմամբ: Թե էլ ինչի կհասցնեին հակահայկական խմորումները, դժվար է ասել, եթե այդ խժդժությունների դեմ հանրապետությունում միջոցներ չձեռնարկվեին: Բարեբախտաբար, Տաջիկստանի իշխանությունները, մտավորականությունը, բուն ինքը՝ ժողովուրդը, աներկբայորեն հասկացան և ըմբռնեցին ազերիների ձեռնարկած սադրանքի ողջ իմաստը: Կատարվածի, խաբված լինելու համար զայրույթի ու վրդովմունքի հետ միասին ամոթի զգացում է արտահայտված այդ օրերին տաջիկ մտավորականության ներկայացուցիչների կողմից հայ ժողովրդին հղած ուղերձում:

Այդուհանդերձ, Ադրբեջանում հայահալած քաղաքականության նկատմամբ կենտրոնական իշխանությունների վերաբերմունքը, հրապարակավ գործադրվող վայրագությունների մտացածին քողարկումը, ինչպես նաև Ադրբեջանում կատարվող ոճիրները՝ դավին անտեղյակ հայ ժողովրդի վրա բարդելու բազմաթիվ փորձերը, օրենքի ու օրինականության խախտումների համար պատասխանատվության չրջանցումը հանգեցրին Հայաստանն ու ԼՂԻՄ-ը շրջափակելու, 1990 թ. Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ Ադրբեջանի կողմից չհայտարարված պատերազմական իրավիճակի ու զինված ընդհարումների սահմանամերձ գրեթե բոլոր գոտիներում:

Այսպիսով, այդ բոլորի հետևանքով, ընդհանուր առմամբ, 1988-1995 թթ. ադրբեջանական դեպքերի կապակցությամբ բնավեր եղան 419 հազ. փախստականներ և հարկադիր վերաբնակեցվածներ, որոնցից 360 հազ.՝ Ադրբեջանական ԽՍՀ-ից, 48 հազ.՝ Լեռնային Ղարաբաղից, 8 հազ.՝ Աբխազիայից, 1,5 հազ.՝ Չեչնիայից, 900-ը՝ Ուզբեկստանից, 600-ը՝ Տաջիկստանից և այլ վայրերից: Նրանցից Հայաստանում ապաստանեցին 381,5 հազ., այդ թվում՝ Ադրբեջանի հետ Հայաստանի Հանրապետության սահմանակից տարածքներից հարկադրաբար վերաբնակեցվածները կազմեցին 72 հազ. մարդ:

Խոջալուն պատմական Հայաստանի մի մասն էր...

1992 թ. փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը Արցախի հայկական ինքնապաշտպանության ջոկատներում կռվող աշխարհազորայինները նահանջի ժամանակ ադրբեջանցիների համար միջանցք էին թողել: Սակայն ադրբեջանցիների զինված հրոսակախմբերը կրակ են բացում նահանջող հայրենակիցների ուղղությամբ: Դա իսկական սպանդ էր: Թող փչելով համաշխարհային հասարակայնության աչքերին և խեղաթյուրելով փաստերը, Խոջալուի դեպքերն Ադրբեջանի իշխանությունները ներկայացնում են որպես Արցախի հայկական ինքնապաշտպանության ջոկատների կողմից իրականացված ցեղասպանություն: Նենգափոխելով իրականությունը, նրանք փորձում են վարկաբեկել հայ ժողովրդին և մոռացության մատնել Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում, Խանլարում և այլուր տեղի ունեցած բարբարոսությունները: Այն մասին, որ Խոջալուի սպանդը վերագրված է հայերին միտումնավոր, վկայում են ոչ միայն հայերը, այլև իրենք՝ ադրբեջանցիները: Օրինակ, Ադրբեջանի նախկին նախագահ Այազ Մութալիբովի՝ "Независимая газета"*-ին տված հարցազրույցում սևով սպիտակի վրա գրված է. «Ինչպես վկայում են Խոջալուի բնակիչները, որոնք փրկվել են, այս ամենը կազմակերպված էր այն բանի համար, որ պատրվակ լինի իմ հրաժարականին: Ինչ-որ ուժ էր գործում նախագահին վարկաբեկելու համար: Ես չեմ կարծում, որ հայերը, որոնք հստակ և գործիմացությամբ են վերաբերվում նման իրավիճակներին, կարող էին թույլ տալ ադրբեջանցիներին ստանալ ֆաշիստական գործողություններում իրենց մերկացնող փաստաթղթեր... Միջանցքը, որով մարդիկ կարող էին հեռանալ, հայերն այնուամենայնիվ թողել էին: Ինչո՞ւ էր պետք կրակել նրանց վրա... Հենց որ տեխնիկան շրջապատեց Խոջալուն, պետք էր էվակուացնել բնակչությանը... Ես այդպիսի հրաման տվել էի, բայց ինչու այն չէին կատարել Խոջալուում, ինձ պարզ չէ»*[31]*: Իրոք, ինչպես վկայում է Ա. Մութալիբովը, ավազակությունը Խոջալուում դարձավ բանսարկություն Ադրբեջանում իշխանափոխության համար:*

1989–1994 թթ. Ադրբեջանում կազմակերպված զանգվածային ջարդերի հետևանքով փախստականների շարքերը խտացան նաև Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունների և Ադրբեջանի կողմից չհայտարարված պատերազմի հետևանքով[32]*:*

---

[31] "Независимая газета", 2.IV.1992.

[32] *Այս մասին մանրամասն տե՛ս Լ. Մ ե լ ի ք - Շ ա հ ն ա զ ա ր յ ա ն. նշվ. աշխ.:*

Ակնհայտ է, որ մինչև 1990 թ. կեսերը, չնայած գործողություններն Ադրբեջանում ընթանում էին Խորհրդային Միության ղեկավար կենտրոնի հովանավորությամբ, հաճախ նրանց կազմած սցենարով, բայց այդ համագործակցությունը բացահայտ տեսք չէր ստանում: 1990 թ. կեսերից Արցախի և Հայաստանի դեմ ուղղված Ադրբեջանի և միութենական կենտրոնի փոխհամաձայնությունը կամ ալյանսը՝ բացահայտ բնույթ ստացավ:

Ադրբեջանի ղեկավարության նպատակամետ և հմուտ ջանքերով մշակվեց և միութենական կոմկուսի կողմից որդեգրվեց իբրև թե հայ «գրոհայինների» կողմից Խորհրդային Ադրբեջանի սուվերենությունը «ոտնահարելու» մասին հնարովի սցենարը: Ադրբեջանի տարածքում և Հայաստանի հետ սահմանամերձ դոտիներում ազերիներին «օր ու արև» չտվող հայ դրոհայինների «ուրվականը» հօդս ցնդեցնելու վերևից հրահանգվող կարգախոսը սլսակվեց խորհրդային բանակի, ՆԳՆ, ՊԱԿ-ի զորքերի և ադրբեջանական օմոնականների ու ազերական հրոսակախմբերի համատեղ զինված գործողություններով Ղարաբաղի, Մարտունաշենի, Գետաշենի, Բերդաձորի, Շահումյանի, ԼՂԻՄ-ի բազմաթիվ բնակավայրերից և ավելի քան երկու տասնյակ գյուղերից զենքի գործադրմամբ խաղաղ, անզեն բնակչության բռնադաղթեցման հետ: Խորհրդային Միության և Ադրբեջանի զինյալ միավորումների կողմից ռազմական ուղղաթիռներից, տանկերից, թնդանոթներից, ավտոմատներից արձակվող գնդակների տարափի տակ զոհվեցին, վիրավորվեցին, մարմնական ծանր վնասվածք ստացան հարյուրավոր հայեր: Այդ օրերին հողին հավասարվեց Հայաստանի Արծվաշեն գյուղը, որի ողջ բնակչությունը փախստական դարձավ:

Հյուսիսային Արցախի՝ Հյուսիսային Մարտակերտի, Շահումյանի, Գետաշենի, որոնք գտնվում էին Ադրբեջանի գաղութային տիրապետության ճիրաններում, հայ բնակչությունը հիմնովին դարձավ բնավեր: Հյուսիսային Արցախը բռնակցվեց Ադրբեջանին, կատարվեց էթնիկական զտում ու բնակեցվեց ադրբեջանցիներով: Դա Ադրբեջանից հայ բնակչության բռնագաղթի և ցեղասպանության հինգերորդ փուլն էր, որի բնորոշ կողմը խորհրդային և Ադրբեջանի զինված միավորումների բացահայտ համատեղ գործողություններն էին, որոնք հայտնի էին «Օղակ» օպերացիայով: Այսպիսով, 1990 թ. գարնանը, գրեթե ավարտին է հասցվում Ադրբեջանի տարածքում հայաշատ բոլոր վայրերի հայաթափության ընթացքը:

Եվ, վերջապես, 1988 թ. սկիզբ առած զանգվածային մարդասպանությունն Ադրբեջանում դարձավ բացահայտ պետական քաղաքականություն: Ադրբեջանը լայնամասշտաբ պատերազմ ձեռնարկեց Լեռնային Ղարաբաղի ամբողջ տարածաշրջանի երկայնքով: Դրանով իսկ սկիզբ դրվեց վեցերորդ փուլին: Այս փուլի բնորոշ կողմը ոչ միայն թշնամի կողմերի միջև մղվող իսկական պատերազմն էր, այլև բուն Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության սպանությունն ու զանգվածային բռնագաղթի կազմակերպումը: Բռնագաղթը ոլորապտույտի մեջ ներքաշեց փախստականների նորանոր քարավաններ:

Ընդհանրացնելով, ավելորդ չէր լինի ասել, որ բոլոր փախստականների՝ նախկինում զբաղեցրած տարածքները, մեկընդմիշտ մնացել են Ադրբեջանին: Դրանք իրենց տարածքներով և այնտեղ նախկինում բնակվող հայ

բնակչության թվաքանակով, համապատասխանաբար, ավելի մեծ և շատ են բոլոր այն տարածքներից ու այնտեղ նախկինում բնակվող ազերիների թվից, որոնք երկրի պաշտպանական նկատառումներից դրդված գրավել է Ղարաբաղի Հանրապետությունը: Զմոռանանք, որ 1979 թ. մարդահամարի տվյալներով Բաքվում ապրում էին ավելի քան 216 հազ. հայեր, Կիրովաբադի բնակչության թվակազմի 17,5 տոկոսը (ավելի քան 40,4 հազ. մարդ), Շեքի քաղաքի բնակչության՝ 58,7, Շահումյան քաղաքի՝ ավելի քան 96, Վարդաշենի ողջ բնակչությունը, Խանլարի բնակչության նկատելի հատվածը, Մինգեչաուր քաղաքի բնակչության 8,7, Սումգայիթի բնակչության թվակազմի 7,2 տոկոսը հայ բնակչությունն էր: Պատկերը գրեթե նույնն էր գյուղական բնակավայրերում՝ 1979 թ. հայերը կազմում էին Շահումյանի շրջանի բնակչության 63,2, Դաշքեսանի՝ 23,9, Խանլարի շրջանի՝ 18,2, Վարդաշենի՝ 9,2 տոկոսը և այլն: Իհարկե, դա 1979 թ. մարդահամարով: Իսկ այսո՞ր...

1988 թ. ԼՂԻՄ-ի բնակչության պայքարը պսակվեց հաջողությամբ: Խնդիրն ինչ-որ չափով ավարտին հասավ այն բանից հետո, երբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, իր մեջ ուժ գտնելով , հարկադրաբար իր սահմանների որոշ մասը մաքրեց թշնամու օղակումներից, ապահովեց երկրի ու ժողովրդի հարաբերական անդորրը՝ թշնամուն դուրս մղելով հանրապետությանը մշտապես սպառնացող ռազմական դիրքերից, կրակակետերից ու բնակավայրերից: Դրանով իսկ ազատագրվեց հայ ժողովրդի պապենական տարածքների մի մասը: Պաշտոնական տվյալներով, Ղարաբաղի Հանրապետության տարածքից 1988–1994 թթ. փախստական դարձավ 48 հազ. հայ բնակիչ: Չպետք է անտեսել, որ 1988 թ. սումգայիթյան և դրան հաջորդած դեպքերի հետևանքով Ադրբեջանի հայաշատ վայրերից փախստական հայերի որոշ խմբեր բնակություն հաստատեցին ԼՂԻՄ-ում, իրենց նախկին բնակավայրերում, հարազատների մոտ: Այդ պատճառով էլ 1989 թ. մարդահամարի տվյալներով մարզի հայ բնակչության տեսակարար կշիռը որոշ չափով ավելացավ: Պետք է նկատել նաև, որ մարդահամարից հետո այն փոքր-ինչ իջավ՝ Արցախում ազերիներով բնակեցված շրջաններում ինտենսիվ բնակարանաշինարարություն իրականացնելու և ազերիներով բնակեցնելու հետևանքով:

Այսպիսով, մինչև 1994 թ. Արցախի մի մասն ազատագրվեց Ադրբեջանից: Ավելորդ չէր լինի նկատել, որ Ադրբեջանի տարածքային ամբողջականության մեջ բնավ էլ մաս չի կազմում ամբողջ Արցախը, քանի որ մինչ 1813 թ. Արցախն ազատագրական պայքար է մղել Պարսկաստանի տիրապետությունից ազատագրվելու և Ռուսաստանին միավորվելու համար: Ազատագրված Արցախը որպես Արևելյան Հայաստանի անբաժանելի մաս՝ միացավ Ռուսաստանին: Մինչև 1921 թ. անկախ Լեռնային Ղարաբաղը, որը բնավ չի եղել Ադրբեջանի տարածքային ամբողջականություն, ղեկավարում էր Արցախի ազգային խորհուրդը: Բայց, Ստալինի և Նարիմանովի ակտիվ ջանքերով, Հայաստանի խորհրդայնացման օրերին Արցախն անօրինականորեն բռնակցվեց Ադրբեջանին: Նկատենք նաև, որ որպես պետություն Ադրբեջանը գոյություն չի ունեցել: Մինչ այդ հիշատակվում էր միայն Իրանական Ադրբեջան, որն էթնիկական կազմով միանգամայն

տարբերվում էր 1918 թ. խորհրդային կարգերի սկզբնավորումից հետո հայտարարված Հյուսիսային Ադրբեջանից: Նորաստեղծ Ադրբեջանի կազմում ադրբեջանցիներից առավել մեծ տոկոս էին կազմում այլ ազգությունները միասին վերցրած: Արցախը (Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ, Աղդամ, Զանգելան, Ֆիզուլի, Կուբաթլու, Ջեբրաիլ, Քյալբաջար, Լաչին ... և այլն) 1994 թ. թոթափեց Ադրբեջանի գաղութային լուծը: Ազատագրվելուց հետո այն չի կազմում Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, քանի որ 1989 թ. վերջերին Ադրբեջանն ինքն իրեն բացարձակ դուրս հայտարարեց խորհրդային իշխանության իրավահաջորդը լինելուց, իսկ Լեռնային Ղարաբաղը նման բացարկ չհայտարարեց և մնաց Խորհրդային Միության կազմում: Խորհրդային Միության փլուզումից հետո, այն իրեն հայտարարեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն և ազատագրեց Արցախի ողջ տարածքը, բացառությամբ Հյուսիսային Արցախի: Էլ ինչ Ադրբեջանի տարածքային ամբողջականության մասին է խոսքը, երբ ազգային-ազատագրական պայքարը ԼՂԻՄ-ում և հարակից շրջաններում ծավալվել է մինչ խորհրդայնացումը և այսօր էլ ազատագրվել Ադրբեջանի գաղութատիրական ճիրաններից: Այդ տարածքների մի մասում ինքնակամ բնակություն են հաստատել Բաքվից, Սումգայիթից, Գանձակից, Մինգեչաուրից և այլ վայրերից բռնագաղթած փախստական հայեր, որոնք կազմում են չնչին թիվ, բացառությամբ Լաչինի: Մինչդեռ ադրբեջանցիները վայնասուն են բարձրացրել գրանցում պետականորեն բնակություն հաստատելու մասին: Նրանք լռում են Հյուսիսային Արցախը տասնյակ հազար ադրբեջանցիներով բնակեցնելու մասին:

Այն էլ նկատենք, որ Հայաստանից, Արցախի ազատագրված տարածքներից արտագաղթած ադրբեջանցիներն Ադրբեջանում արդեն տուն ու տեղ ունեին, հետևապես չդարձան անտուն գաղթականներ, ինչպես պնդում են Ադրբեջանում՝ «մեկ միլիոն անտուն, վրաններում ապրող միգրանտների մասին»: Գա մեծ մասամբ հորինված թիվ է: Մանրազնին հաշվարկներից բխում է, որ ԼՂՀ-ի կողմից վերահսկվող տարածքներից արտագաղթել են մոտ 300 հազ., ԼՂՀ-ից՝ 45 հազ., Հայաստանի Հանրապետությունից՝ 160 հազ. ազերիներ: Այսինքն, արտագաղթող ազերիների թիվը կազմել է ոչ թե 1 մլն, այլ 500 հազ.: Ուրեմն, նրանք թիվը կեղծելով՝ կրկնակի անգամ ավել են ներկայացնում:

Բայց, այնուհանդերձ, Արցախի մի զգալի մասը ինչպես վերը նկատեցինք (Հյուսիսային Արցախից՝ Մարտակերտ, Շահումյան, Խանլար, Գետաշեն), հայերին բնավեր դարձնելով՝ մնաց ադրբեջանական:

ГЕНОЦИД И ВЫТЕСНЕНИЕ АРМЯН В АЗЕРБАЙДЖАНЕ (1918 – 1990-е годы)

ВЛАДИМИР ХОДЖАБЕКЯН

Резюме

Приписать геноцид и гонения против малых наций в Азербайджане карабахскому движению означает согрешить против истины и исторической действительности. Факты свидетельствуют, что осуществляемая здесь национальная политика – это логическое продолжение Геноцида армян. В сентябре 1918 г. турецкие оккупанты и мусаватистские банды в Баку организовали убийство 30 тыс. армян, а также русских. В период установления советской власти в Армении И. Сталин и Н. Нариманов, грубо нарушив международные правовые нормы, насильственно присоединили Нахичеванский уезд Ереванской губернии к Азербайджану. Азербайджанский и Нахичеванский ЦИК-и воспрепятствовали возвращению депортированных армян на свою родину, вследствие чего в 1926 г. втрое сократилась численность армян, а сейчас там нет ни одного армянина. 28 февраля 1988 г. Правительством и ЦК КП Азербайджана был организован трехдневный геноцид армян в Сумгаите, потом – в Гяндже и Ханларе. Преступники остались безнаказанными. 13 января 1990 г. Сумгаит и Кировабад породили Баку. В течение двух недель варварств, царивших в Баку, были измучены и депортированы армяне и русские. В эти дни мученической смертью пали 150 армян. Власти Азербайджана стали обвинять Советскую Армению в учиненных беспорядках, более того, сфальсифицировав факты, они объявили этот день днем траура. Между тем, позднее, совместными усилиями Советской Армии, Народного фронта и омоновцев Азербайджана при поддержке авиации, танков и артиллерии было осуществлено нападение на Северный Арцах (Северный Мардакерт, Шаумян, Геташен и т. д.). Северный Арцах был насильственно присоединен к Азербайджану, здесь произвели этническую чистку и территорию заселили азербайджанцами. Об этом они умалчивают. Итак, вследствие геноцида, осуществляемого в Азербайджане в 1988-1992 гг., полностью были разорены 419 тыс. армянских беженцев и вынужденных переселенцев, 361 тыс. которых – из Азербайджана. Между тем, численность азербайджанцев, эмигрировавших из Республики Армения и с освобожденных территорий Нагорного Карабаха, составила не 1 млн. человек, как заявляют азербайджанцы, а 500 тыс. человек.

THE GENOCIDE AND SUPPLANTING OF THE ARMENIANS IN AZERBAIJAN (1918 – 1990)

VLADIMIR 'KHOJABEKYAN

Summary

To say that the genocide and persecutions of ethnic minorities in Soviet Azerbaijan were prompted by the Karabagh movement would be to sin against the truth and the

historic reality. The facts testify that the national policy realized by Azerbaijan was the logical continuation of the Genocide of the Armenians committed by the Turks. In the September of 1918 the Turkish occupants and Musavat bands organized in Baku the massacre of 30.000 Armenians as well as Russians. At the period of establishment of the Soviet power in Armenia, J.Stalin and N.Narimanov, breaking violently international legal principles, annexed in Azerbaijan's favour the region of Nakhijevan of the province of Yerevan. The Central Executive Committees of Azerbaijan SSR and Nakhijevan ASSR banned the Armenian population of Nakhijevan, that had been deported from the region before, to return home. As a result of that, in 1926 three times reduced the number of the Armenian population. Today, not a single Armenian lives there. From February 28, 1988, the Sumgait genocide continued in the streets for three days and nights: pogrom-makers remained unpunished. Sumgait gave birth to Baku, Gyanja (Gandzak), Khojalu, Dashkesan, Khanlar and other massacres. In the course of the two-week massacres in Baku the tortures of Armenians and Russians and their deportation from Azerbaijan were organized and carried out. During those days 150 Armenians were brutally killed. Instead of admitting its guilt and giving an answer the leadership of Azerbaijan blamed the USSR army and falsifying the facts without shame declared those days as mourning days. Meanwhile, later the Red Army and the Popular Front of Azerbaijan together with special brigades, using airplanes, tanks and cannonry invaded Northern Artsakh (Northern Martakert, Shahumyan, Getashen and other regions), exterminated and deported peaceful Armenian population. Through realization of the misanthropic policy of ethnic "cleansing," Northern Artsakh has been annexed by Azerbaijan and populated by the Azerbaijani-Turks. They keep silent about it. Thus, because of the genocide, on the whole, in 1988-1992, as a result of the Azerbaijani atrocities, 419.000 Armenians were deported and became refugees of which 361.000 from Azerbaijan SSR (then the Republic of Azerbaijan). Meanwhile, the number of the Azerbaijani, emigrated from the Republic of Armenia and the liberated territories of Mountainous Karabagh isn't 1 million people, as it is announced by the Azerbaijani, but 500000 people.